

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

Ը. — Ի Կ Ի Ն Ն Պ Ո Ռ Ն Ի Կ

Երանելոյն Թէոփիլոսի՝ Աստուածաբան եւ բանիբուն Վարդապետի ասացեալ յաւետարանական պատմութենէ, Ի կինն պոռնիկ, որ արդարացաւ աւծմամբ իւղ(ւ)ոյն:

Եւ արդ ինծ ապաստան լինել պարտ է յանբաւ մարդասիրութիւնդ քո, որ վասն իմ զայս ամենայն կրել հաճեցար. զի ոչ առնես անտես զեղկելիս եւ զթշուառականս, ոչ անտես առնես զծանրացեալս զանազան մեղաւք. ոչ առնես անտես զաղտեղացեալս պէս պէս յանցանաւք, ոչ անտես առնես զողորմելիս յիշեալ յանբաւ ողորմութիւնդ քո, մարդասէր Տէր, ոչ անտես առնես զաղախին քո զյանցաւորս, որ վասն յանցաւորացս անհամեմատելիդ համեմատեցար մարմնով:

Իբրեւ զայս ամենայն աղաւթեաց պոռնիկն երանելի՝ համարծակեցաւ մտանել ի տուն Սիմոնի բորոտին: Որպէս եւ ասէ աւետարանիչն Ղուկաս. Իբրեւ գիտաց եթէ բազմեալ է Յիսուս ի տան Սիմոնի փարիսեցոյն, բերեալ շիշ մի իւղոյ նարդեան ագնրի մեծագնոյ, կայր յետոյ առ ոտս նորա, լայր եւ արտասուաւքն թանայր զոտս նորա, եւ համբլբլէր եւ աւծանէր իւղովն եւ ասէր. ընկալ, Տէր, եւ մի անտես առնիր եւ մի մերժեր զիս, Տէր Աստուած իմ. զի լուայ ի քէն թէ՛ զեկեալն առ իս ոչ հանից արտաքս: Ընկալ եւ մի մերժեր զաղախին քո, անոխակալ Տէր, զի լուայ ի քէն ասելով, թէ ոչ եկի կոչել զարդարս այլ զմեղաւորս յապաղիարարութիւն: Ընկալ եւ մի մերժեր զաղախին քո, բազմագուծ Տէր, զի լուայ ի քէն թէ՛ մաքսաւորք եւ պոռնիկք մոցնն յարքայութիւնն երկնից: Ընկալ Տէր, եւ մի անտես առնիր զաղախին քո, ողորմած Տէր, որ ոչ անտես արարեր զաղախան կնոջ քանանացոյն: Ընկալ Տէր, եւ մի անտես առնիր զաղախին քո, մարդասէր Տէր, որ ոչ անտես արարեր զկինն տեռատես, առ ի բժշկել զհոտումն արեան նորա: Ընկալ եւ մի մերժեր զաղախին քո, զթած Տէր, որ զմիւս այլ պոռնիկն՝ մատամբ գրոյ քո ջնջեցեր զմեղս նորա: Ընկալ եւ մի մերժեր զիս, բազումողորմ Տէր, որ ընդունեցար զմաքսաւորն աշակերտ քեզ: Ընկալ եւ զիս Տէր,

154բ - 157բ, [Աղօթք առ Տեհն մեր Յիսուս]
— Տէր ողորմեայ ... այսմ յետէ մինչեւ
յաւիտեան:

158ա - 161բ, [Աղօթք առ Եանայեցեաց Պեհե-
սիբոս] — Տէր ողորմեայ ... ոգւոյն
սրբոյ ընդ ամենայն յաւիտեանս յա-
ւիտեանից. ամէն:

162ա - 162բ, [Շուրակաւն ի վերայ Սրբոյն
Լորեմսիոսի] — Բաշխ նահատակ ...
միշտ բարեկալ(օս)եայ:

163ա - 164բ, Յանկի Գլխոյ (միայն լեհերէն),
166ա - 167բ, Յիւստակարան (լեհերէն),

Յիւստակարան

ճա, Յիշատակ է Երգարանս այս ձայնա-
ւոր աղօթից, ընդ որում գրեցի ես՝ Տէր
Աստվածատուր՝ որդի Օմանիսի պարօնը
(Չնշուած է գիտաւորեալ — Փ. Ա.) յիշա-
տա՛ք քոյ իմոյ Անդօնիայի՝ կոյսոյ
Սրբոյն Պենէտիքթոսի Հայոց, ի փառս
ամենասուրբ Երրորդութեան եւ ի պատիւ
Վերափոխմանն իւսոյն Մարիամայ եւ ա-
մենից սրբոց: Բայց քանիցս որ անգամ
կարդացէ՛ք, զանաւո՛թանս ոչ մոռացէ՛ք
աղօթից ձերոց: Թամի Տեառն 1757, լա-
դիւնացոց օրն՝ Ց-ին Հոկտեմբերի:

(Երկու տող՝ լեհերէն, ստացողի մա-
սին, ինչ որ հայերէնում է):

ՓԱՅԼԱԿ ԱՆԹԱՊԵԱՆ

որ ընկալար զկինն Սամարացի, շինել վարդապետ բազմաց, եւ քարոզել զքեզ կենաց եւ մահու Աստուած:

Ողորմեայ Տէր եւ ինձ, որ ընկալար զպոռնիկն Բախար վասն Յեսայ ծառայի քո եւ անւանակցի: Ողորմեա Տէր, եւ ինձ մեղաւորիս, որ ընդունիս մեղաւորս արարի զբազմութիւն մանկանց անմեղաց: Անյիշալար Տէր, ողորմեայ ինձ պարտելոյս ի խաբօղէն, որ զբազում երիտասարս պարտեցի մեղօք: Ընկալ, ամէնախնամ Տէր, զծերացեալս մեղաւք, որ զբազում մարդիկս ծերացուցի պոռնկութեամբ իմով չարաչար: Ընկալ Տէր, զանառակս, որ զբազում իմաստունս անառակեցի, եւ ի գործս անառակութեան յիմարեցուցի: Ընկալ Տէր, զծանրակիրս մեղաւք, որ զթեթեւացեալսն ի յանցանաց ծանրացուցի չարաչար: Ընկալ Տէր, զանաւթս սատանայի, որ յանձնից ընտրելոց՝ զընտրեալսն դատարկեցի ի գործոց բարեաց: Ընկալ Տէր, զվիրաւորեալս ի նետից սատանայի, որ զբազումս վիրաւորեցի ի յարծակմանէ լրբացեալ գեղոյ իմոյ: Ընկալ զիս Տէր, զմեռեալս ի բազմախոց սուսերաց բանսարկին, որ պատերազմեցայ անդամաւքս զարդարեալ, եւ սպաննի զբազումս ի հակառակաց թշնամոյն Աստուծոյ:

Լայր դառնապէս եւ արտասուաւքն թանայր զոտս արարչին, աղալէր եւ ասէր. Լուսաւորեա զպէս իմ՝ լուսոյ տուիչ կուրաց, զխաւարեալս մեղաւք, զի սորաւք ցանկացայ բազմաց, եւ ի ծեռն գեղոյ սորայ գայթակեցուցի զծերս եւ զմանկունս: Սրբեա բարերար Տէր, զհեր գլխոյ իմոյ, զորս դիզացուցանէի ի վերայ պատկերաց իմոց, ի տեսակս գործէի, լարեալ պատրաստեալ էի որոգայթ, եւ որսայի զազգակիցս եւ զընտանիս, արկանելով յուռկանս սատանայի: Մարբեայ զայսոս շփոթող, որով բոլորեալ գեղեցկացուցանէի ի դեղով: Զսկիզբն չարին պայծառացուցանէի ի յաչս մարդկան, մինչեւ բորբոքէի զցանկութիւն նոցա մտանել առ իս. զկամողս շփոթէի եւ զակամայս՝ ի հաղթս աղտից իմոց:

Զայս ամենայն դէպ էր ասել նմայ, զոր ընդունեցաւ մարդասէր Տէրն մեր. քանզի յայտնապէս խոստովանեցաւ անդամաւքն ամենայն, զորս ածեալ էր ի սպասաւորութիւն մեղաց իւրոց: Այաւքն. զոր ցանկացեալն էր բազմաց, եւ ի ծեռն դեղոյ նորայ զբազումս արարեալ ցանկացող մեղաց. եւ վասն այսորիկ աղբիրացոյց առատարուխ արտասուօքն, եւ թանայր զոտս Տեառն, զի փարատողս արտասուցն եւայի եւ զնա կեցուցանէր: Եւ հերոմէ մարբէր, զի գեղեցկացուցեալ էր զնա ի վերա երեսաց իւրոց: խոստովանէր զի ի ծեռն նորա զբազումս գայթակեցուցեալ էր, ածէր ի սպասաւորութիւն զի սրբեսցէ զնա. վասնորոյ լուաւ զբանն թէ՛ Թողեալ լիցէն սմա մեղք իւր բազում:

Եւ արդ՝ զի վայելեաց զբաւութիւն եւ զթողութիւն, եւ արժանաւորեցաւ արքայութեանն երկնից, եւ գովի ի հրեշտակաց եւ ի մարդկանէ. լուր աւետարանին զինչ ասէ յորժամ զայրանային նմայ աշակերտքն, եւ խաւսէին չար զմանէ, եթէ ընդէր եղեւ կորուստ իւրոյդ այդմիկ. մարդ էր վաճառել զիւրդ զայդ աւելի բան զերեք ձ դինարի եւ տալ աղքատաց: Յայնժամ ասաց Յիսուս. Ամէն ասեմ ձեզ, ուր եւ քարոզեսցի աւետարանս այս ընդ ամենայն աշխարհս, զոր արար դա խօսեսցի վասն դորա:

Տես, ով սիրելի. Թէ զհարդ ի վեր քարոզեաց զկինս զայս, զի գործ մի բարի գործեաց դա յիս ասէ. զաղքատս յամենայն ժամ ընդ ձեզ ունիք, եւ յորժամ կամիր կարաւոր էք նոցա աւելնել, այլ զիս ոչ յամենայն ժամ ընդ ձեզ ունիք: Ոչ ապաքէն ասէ Մատթէոս՝ Ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչ ի կատարած աշխարհիս. եւ նա ասէ. Աստ զաղքատս յամենայն ժամ ընդ ձեզ ունիք, այլ զիս ոչ հանապազ ընդ ձեզ ունիք: Զի՞նչ իցէ ասացեալս, միթէ հակառակէին միմեանց բանք աւետարանեաց. ո՛չ, քաւ լիցի: Ապա զի՞նչ իցէ այս: Ինձ այսպէս թրուի թէ յաղագս անճառելի տնաւորենութեանն իւրում ասացեալ է զայս: Զիս ոչ յամենայն ժամ ընդ ձեզ ունիք այս մարմնովս զոր զգեցեալս եմ, իսկ յորժամ համբառնամ առեցեալ մարմնովս, զաղքատս ընդ իս ոչ վերացուցանեմ, զորս եղբարս անւանեցի. եւ զբարիս առնել նոցա ինձ համարեցայ: Թէպէտեւ զաւրութեամբ աստուածութեան իմոյ ընդ ձեզ եմ, զամենայն աւուրս մինչեւ ի կատարած աշխարհիս, այլ առեցեալ մարմնովս իմ ոչ տեսանէք զիս:

Եւ յորժամ ասեմք զբան Տեառն թէ ո՛չ զիս հանապազ ընդ ձեզ ունիք, բաժանեմք յԱստուածութենէ, իբր թէ այլ է Աստուածութիւնն եւ այլ է մարդկութիւնն, եւ այնպէս ասեմք: Գաւ լիցի. չար է յոյժ հերձեաճող, ի բաց տար զանաւորէնութեան բանդ զայդ. այլ զի խնումք զայդպիսեաց բերան հերձեաճողաց՝ բերաք ի մէջ զբանս զայս. զի յորժամ ասաց Տէրն թէ զարթատս յամենայն ժամ ընդ ձեզ ունիցիք, այլ զիս ոչ հանապազ ընդ ձեզ ունիք, յաղազս տնաւորէնութեանն ասաց:

Այլ մեք յառաջ ի բանս դարձցյալք, եւ տեսցուք թէ զի՛նչ ասաց Գրիստոս ցկինն այն, եւ կամ թէ որպէս ընդունեցաւ զայն, որ աշակերտք եպեղէին եւ Սիմոն փարիսեցին, եթէ ընդէ՞ր եղեւ կորուստ իւղոյդ յայդորիկ: Եւ Յիսուս ասէ ցՍիմոն առականք. Սիմոն, ունիմ ինչ ասել քեզ: Եւ նա ասէ, Ասա, Վարդապետ: Ասէ Յիսուս. Բ պարտապանք էին աւանան փոխաւորի, մինն պարտէր ե՞ժ դահեկան, եւ միւսն Ծ: Իբրեւ ոչ գոյր նոցա հատուցանել, երկոցունցն շնորհեաց: Արդ ասա ինձ, ո՞ առաւել սիրեսցէ զնա: Ասէ Սիմոն. ինձ այսպէս թրի թէ որում զբազումն շնորհեաց: Ասէ Յիսուս. Ուղիղ ետուր զպատասխանիդ: Ես մտի ի տուն քո, ջուր ոտից իմոց ոչ ետուր, իսկ սա արտասուաք իւրովք եթաց զոտս իմ, եւ հերով իւրով ջնջեաց, համբոյր մի դու ոչ ետուր ինձ, սա աւասիկ ոչ դադարեաց ի համբուլիւնիդ զոտս իմ. իւղով զզուլիս իմ ոչ աւժեք, սա իւղով անուշիւ աւժ զիս: Վասնորոյ ասեմ քեզ՝ Թողեալ լիցին սմա մեղք իւր բազում զի յոյժ սիրեաց. զի որում շատ թողուցու շատ սիրէ, եւ որում սակաւ՝ սակաւ:

Մեծ էր շնորհն այն զոր ընկալաւ կինն այն յԱստուծոյ: Մեծ էր պարգեւք նորա ի պարգեւատուողէն: Մեծ էր բարեբախտութիւն կնոջն: Մեծ էր բարեգթութիւնն Աստուծոյ առ յանցաւորն այն: Մեծ էր երախտիք Փրկչին առ արարածս իւր: Մեծ էր թողութիւն դատաւորին մեղանշականիս այս: Մեծ էր զթութիւն բարեբարին առ մեղաւորս այս: Մեծ էր անոխակալութիւնն արարողին առ բազմամեղս այս:

Վասն այնորիկ պարտ է նախանձն Նմայ եւ ասել. Երանի(ան)ի է քեզ, ով կին դու, զի ի շնորհաց արարչին Բ լոյս ծագեցաւ ի վերայ քո. մին զի արժանաւորեցար համբիւրել զոտսն Աստուծոյ. եւ Բզ զի լոյս շնորհաց առաջնորդեցաւ քեզ. Երանի է քեզ, ով կ[ին] դու, զի պարգեւս Բս վայելցէր. մին զի ձեռաք քո շաւառփիցք զանշաւառփիին, եւ Բզ զի սիրաւ Նմայ կոյեցար, որպէս եւ ինքն ասաց թէ յոյժ սիրեաց զիս: Երանի է քեզ, ով կին դու, զի Բ ընձեռման արժանաւորեցար. մի՛ որ հերով քո մաքրեցեր զոտսն, որոյ աթոռն երկինք է եւ երկիրս պատանդան ոտից նորա. եւ Բզ զի գործ մի բարի ընդ Տեառն գործեցեր, որպէս եւ ինքն աս(ա)աց: Երանի է քեզ, ով կին դու, զի Բ անուն մարգարէութեան ընկալար. մի՛ զի իբր գեղեւալ գիտացեր զթողութիւն յանցանաց քոց, եւ այնպէս համարձակեցար մերձենալ ի մարմին Աստուծոյ. Բզ զի զթաղումն նորա գուշակեցեր, զոր եւ ինքն ասաց թէ առ ի թաղելոյ զիս նշանակեաց: Երանի է քեզ, ով կին դու, զի Բ գովս ընկալար ի բերանոյն Աստուծոյ. մի զի առաջի Սիմոնի եւ աշակերտացն իւրոց գովեաց զքեզ. եւ զմիւսն այն թէ՛ Ուր եւ քարոզեսցի աւետարանս այս ընդ ամենայն երկիր՝ խաւսեսցի վասն յիշատակի դորայ:

Երանի է քեզ, ով կին դու, զի Բ ուրախութեամբ ուրախացար. մի զի փոխապարտն, զոր ոչ ունէիր հատուցանել՝ թողաւ քեզ, եւ Բ զի լըար յարարողէն թէ՛ հաւատ[ը] քո կեցուցին զքեզ, երթ ի խաղաղութիւն: Երանի է քեզ, ով կին դու, զի յԲց դասուց հուշակեցար, մի յերկնային զօրացն, եւ Բ ի մարդկայինս ազգաց: Երանի է քեզ, ով կին դու, զի Բ զարմանալի զգնատ զգեցար. մի զի մերկացար զպատմունան միգոյ, եւ միւսն զի զգեցար առժամայն զթողութիւն մեղաց:

Ընդէ՞ր ոչ էր երանելի կինն այս, որ այնպիսի հաւատ զգեցեալ էր՝ աւտար պոռնիկ տարայոյան: Զի մինչ աշակերտքն Յիսուսի, որ ընդ Նմայ էին, կորուստ համարէին զթափումն եւղոյն(*): Եւ կինն այս գիտէր որ իբրեւ զԱստուած կարող էր թողել զմեղս

(*) Զեռ. եղւոյն:

իւր բազում: Որք ոչ էին գնեալ զիւղն՝ ափսոս համարէին, եւ գնաւոյն յաւժարութեամբ թափէր, եւ առ սրտագէտն իւր Աստուած՝ աղաչանս մատուցանէր, յորմէ ընկալաւ զանանցական ուրախութիւնն եւ զկեանսն յաւիտենականս, եւ վայելեաց զանուն գովասանաց մինչեւ Սկիւթացիք, Եթէովպացիք(*), Բաբելացիք, Գամրացիք, յազգս խուժարութժ բարբարոսաց քարոզեցի անուն նորա, եւ ի բերանոյ ամենայն հաւատացելոց երանեսցի:

Ընդէր ոչ էր երանելի կինս այս, որ երէկ ի դիւաց գովէր եւ այսաւր ի հրեշտակաց բարբերանի: Ընդէր ոչ երանելի էր կինս այս, որ երէկ սպասաւորէր սատանայի եւ ծանրացուցանէր զբռնին մեղաց, այսաւր սպասաւորեաց Քրիստոսի, եւ թեթեւացոյց զծանրութիւնն բռնին մեղաց իւրոց: Ընդէր ոչ երանելի էր կինս այս, որ երէկ դիզացուցեալ էր զհաղթս մեղացն ծանրագունից, եւ այսաւր իբրեւ զփոշի հոսեալ ջրուեաց զամենայն: Ընդէր ոչ երանելի էր կինս այս, որ երէկ զցորեանն ճշմարիտ ծածկեալ ընդ յարդովն, եւ այսաւր Աստուածային երանաւն երնեաց՝ քամովն հաւատոյ, եւ յոստակեալ զցորեանն յուսոյ հոսելեան, եւ արկանէ յիշտեմարանս Տեառն: Ընդէր ոչ երանելի էր կինս այս, որ երէկ աշակերտէր սատանայի եւ կամարար դասուց նորա, եւ այսաւր աշակերտեալ Քրիստոսի, հրաժարեալ ի խաւարային վարդապետէն, դասաւորեցաւ ընդ վարդապետն լուսոյ, եւ լուսաւորեցաւ լուսնոյ շրջանոյ նորա:

Ընդէր ոչ էր երանելի կինս այս, որ մինչ մտանէր ի տուն Սիմոնի բորտի՝ լի էր բազում յանցանաւք, եւ մինչ ելանէր՝ առժամայն լի եղեւ արդարութեամբ: Եմուտ մեղաւք եւ ել(ան) անմղ: Եմուտ ազուաւ եւ ել աղանի: Եմուտ սեւաւ եւ ել սպիտակ: Եմուտ պեղծ եւ ել սուրբ: Եմուտ մեղաւոր եւ ել անմեղ: Ընդէր ոչ էր երանելի կինս այս, որ մինչ մտանէր առ Քրիստոս՝ խաւարաւ աղբամղջին ծածկեալ լինէր, եւ յորժամ ել, ի նմին ժամու իբրեւ զարեգակն պայծառացաւ հոգովն:

Եւ արդ պարտ է մեզ նախանձաւոր լինել նմայ, ոյք զնա երանիցեմք, զի եղեւ նա աւրինակ բազմաց: Եւ առաւել յոյս էր տարայուսից, իթէ քարոզ միայն լսէաք թէ որ մեղանէք՝ դարձիք յապաշխարութիւն եւ Տէր ընդունի զծնդ եւ զղջումն արտասուց ձերոց, եւ արդարանաք: Պարտ էր հաւատալ Տեառն եւ յուսով մեծաւ. դիմել յապաշխարութիւնն եւ արդարանալ, թող թէ եղեալ լըւաք՝ զծանրացեալի մեղաւք որ ջերմ հաւատով դիմեաց յապաշխարութիւնն եւ յական թաւթափելն արդարացաւ: Եւ մեք դեռ եւս հեշտանամք եւ մնամք յուսահատութեան, ի տիղմն խոզից թաւալիմք եւ ոչ ստորջանամք, եւ զայս յայտնապէս ասեմք, զի յորժամ զաւրինակս տեսաք, եւ յապաշխարութիւննէ, պատրաստեալ է մեզ գեհնանն անշէջ՝ առաւել քան այնոցիկ որոց աւետարանս այս ոչ է քարոզեալ, քանզի ահ մեծ է անկանել ի ձեռս Աստուծոյ կենդանւոյ:

Ձի կնոջս այս թէ ո՛րքան մեղաւք լցեալ էր՝ ոչ եղեւ պէտս ամս բազումս եւ ոչ ամիսս եւ ոչ շաբաթս, ոչ աւուրս եւ ոչ ժամս բազումս, այլ ի միում պահու եմուտ բազում մեղաւք լցեալ, եւ առ ժամայն ել արդար: Եւ այլ եւս ասացից. տես զաւագակն, որ յական թաւթափելն արդարացաւ ի վերայ խաչին, քանզի յամենայն ժամ պէտս էր ասելոյ, թէ յիշեա՛ զիս Տէր յորժամ գաս արբայութեամբ քով, եւ կամ ի սուղ ժամանակի: Եւ քանզի ձերմ յուսով ապաւինեցաւ ի Քրիստոս, ասել զդռնաքեալ քանն փութապէս, եւ պատասխանի լըւաւ քանին զանբաւ եւ զմեծամեծ պարգեւսն. եթէ այսաւր ընդ իս իցես ի դրախտին:

Ո՛ւր, ասես, գտանեմ զՔրիստոս, ի տան կամ ի խաչին, եւ կամ ուստի՞ մատուցանեմ նմայ եղս մեծագինս առաւել քան զերեք ձ դեկարի, եւ առից զթողութիւն: Եւ կամ ո՞ արասցէ զիս խաչակից Քրիստոսի, զի ասացից՝ Յիշեա զիս, Տէր, յարբայութեան քում, եւ արժանացայց այնպէս պատասխանւոյ: Կարի յոյժ, ասէ, եթէ կամիցիս գտանել զնա, ոչ է բեզ պէտս գնալ ի հեռագոյն ճանապարհս, եւ կամ հեռանալ

յանձնանոթ տեղիս, այլ յամենայն տեղուք եւ յամենայն փողոցս եւ յամենայն քաղաքս եւ յամենայն հրապարակս, եւ ոչ թէ ի տունս աւտարաց, այլ ի տան քում գայցէ քաղում անգամ: Եւ ոչ թէ ի պէտս է իւղոյ մեծագնի, այլ կոտոր մի հացի եւ բաժակի միոյ ցուրտ ջրի: Եւ թէ ասիցես թէ զհարդ գտից զնա ի տան իմում: Լուր եւ ասացից քեզ. հաւատա՞մ զինչ ասաց նա, որ զկինս գայս արդարացոյց, զի ինքն զաղքատս եղբարս իւր անուանեաց:

Քանզի յառաջ քան զաւժանելն կնոջն այն գոտս նորա իւղով ասաց. եկայք աւրինեալք Հաւր իմոյ, ժառանգեցէք պատրաստեալ ձեզ զարքայութիւնն երկնից: Վասնզի, որովհետեւ արարէք միում յեղբարց իմոց՝ ինձ արարէք: Եւ որպէս ասացի թէ ոչ է ի պէտս իւղոյ մեծագնի այլ պատառ մի հացի, եւ բաժակ մի ցուրտ ջրի: Զի եթէ կինս այս մեծագին իւղով էաւժ գոտս Տեառն եւ արդարացաւ, դու լրեայ գոտս աղքատին աշխատելոյ ջրով եւ արդարանաս: Եւ մինչեւ ի բաժակ մի ցուրտ ջուր իջուցանէ Աստուած գոտուր ողորմութեանն. զի ոչ հայի Աստուած ի տուրս մեծամեծս, այլ ի բարս յաւժարութեան տըւօղին:

Երբժամ տեսանիցես զաղքատն անկեալ ի փողոցս մերկ եւ քաղցեալ եւ ոչ ունիս ինչս զի ընուս զկարաւտութիւնն նորա, ապաշաւեսցես ի սրտի քում, եւ աւաղեսցես ի կամաց քոց, եւ ասիցես՝ վայ ինձ, որ չունիմ ինչս առ ի ընուլ զկարաւտութիւնս քո. այնպէս համարի Աստուած թէ լցեմ զկարաւտութիւնն նորա: Իսկ եթէ ապաշաւես միայն, եւ կարող ես ընուլ(*) զկարիս նորա եւ ոչ ընուս, դատապարտիս. որպէս եւ Քրիստոս ասէ. Որ ցանկայ կնոջ՝ ահայ շնացաւ ընդ նմայ ի սրտի իւրում: Իսկ եթէ կարող է եւ կամի, եւ ոչ կատարէ զցանկութիւնն իւր, վասն երկկիւղին Աստուծոյ նախատակի: Ապա թէ յաւժար է ի կատարել զգործ ցանկութեանն, եւ ոչ հանդիպի, դատապարտի ըստ արժանեացն: Այնպէս եւ առ աղքատս լիցի:

Եւ դու յորժամ լրիցես, մի համարձակիս շատ առ բաժակ մի ջրոյն, եւ ունիս կարողութիւն ընուլ զամենայն պէտս նորա, եւ զծարաւն միայն յաւժարիս լընուլ, եւ զայն անտես առնես. ոչ գիտես եթէ ի շատէն շատ խնդրէ Աստուած, եւ ի սակաւուն սակաւ. որպէս եւ ասաց ջՍԻմոն բորոտն վասն կնոջն, թէ որում շատ տըւաւ՝ շատ սիրէ, եւ որում սակաւ՝ սակաւ: Նոյնպէս եւ աստ, որ շատ ունի՝ շատ խնդրէ Աստուած ի նմանէ, եւ որ սակաւ՝ սակաւ. եւ հաւասար համարի զսակաւն ընդ շատին: Զի թէ միումն [որ] ունի ձ դահեկան, եւ անտի զյիսունն կարաւտելոց տա, եւ այլ ոմն ունի տասն դրամ փողոյ, եւ զհինգն աղքատաց տացէ, հաւասար են առաջի Աստուծոյ:

Զի որ շատ ունիցի եւ սակաւ տացէ աղքատաց՝ դատապարտի, եւ որ սակաւ ունիցի, եւ ի սակաւուն տացէ աղքատաց, ընդունելի են առաջի Աստուծոյ, որպէս այրին այն, որ զԲ լումայն արկ ի գանձանակն եւ արդարացաւ. քանզի կամաց սրտին ընդունելի են տուրքն, որպէս եւ կնոջս այս համարեցաւ: Գիտէր կինն այն թէ Քրիստոս ոչ ունէր պէտս աւժանելոյ գոտս իւր, այլ զյաւժարութիւնն սրտի նորա ընկալաւ, եւ բազում մեղաց նորա շնորհեաց զթողութիւն: Նոյնպէս եւ յոր իրս յաւժարի սիրտ մարդոյն գործել՝ զայն արասցէ, եւ հաճոյ է Աստուծոյ:

Եթէ կամենայ եկեղեցի շինել, մի ասել թէ լաւ էր աղքատաց բաշխել: Եւ թէ յորդորի որ աղքատաց ողորմութիւն առնել, մի ասել թէ լաւ էր գերիս գնել: Եւ թէ կամիցի որ նւէրս մատուցանել Աստուծոյ, մի ասել թէ պարտ էր ընուլ զորովայնս կարաւտելոց: Քանզի յի՛նչ բարի եւ յաւժարի սիրտ տըւողացն, այն է ընդունելութիւն կատարեալ առաջի Աստուծոյ. որպէս եւ կնոջս այս համարեցաւ, եւ արժանացաւ թողութեան մեղաց եւ արքայութեան երկնից. որում եւ զմեզ արժանիս արասցէ Քրիստոս Աստուածն մեր, Ամէն:

(Շաբ. 15)

Հրատ. Ա. Յ. ՍԻՃՈՒՆԻ

(*) Զեռ. լնուաւ: